ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

☐ Ընթացիկ հաշվետվություն

☑ Եռամսյակային Համախմբված ֆինանսական հաշվետվություն

☐ Տարեկան հաշվետվություն

« ԱՍԿԵ ԳՐՈՒՊ » բաց բաժնետիրական ընկերություն,
թողարկողի ֆիրմային անվանումը (անունը,ազգանունը)

Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը

ք.Չարենցավան Երևանյան 2, հեռ. 0226 46427 asce@asce.am

գտնվելու վայրը,հասցեն, կապի միջոցները(հեռախոս,ֆաքս, էլ-փոստ և այլն)

N 03 15.11.2024թ .

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	սովորական
արժեթղթերի քանակը՝	62,923,840 հատ
արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)՝	170 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք,որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ,որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:
ստորագրող անձինք՝

Կարինե Մամիկոնյան	Ֆինանսական տնօրեն		15.11.2024թ .
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Հրաչյա Մուրադյան	Տնօրեն		15.11.2024թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ

Միջանկյալ Համախմբված ֆինանսական հաշվետվություն

2024թ. 3-րդ եռամսյակ

Հասցե	ք. Չարենցավան, Երևանյան 2
Հեռախոս	(0226) 4-64-27
Էլ. փոստ	asce@asce.am
Ինտերնետ կայք	www.asce.am

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք՝ ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ տնօրեն Հրաչյա Մուրադյանը և Ֆինանսական տնօրեն Կարինե Մամիկոնյանը, սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լավագույն ձևով արտացոլում են ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը:

Կառավարման մարմինների զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները, զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է ընկերությունը:

Տնօրեն՝

Հրաչյա Մուրադյան

Ֆինանսական տնօրեն՝

Կարինե Մամիկոնյան

Կառավարման մարմինների միջանկյալ զեկույց

2024թ 3 եռամսյակ

«Ասկե Գրուպ». Հայկական խոշոր պողպատաձուլական ընկերություն, որն իր ճիշտ քաղաքականության արդյունքում շատ կարճ ժամանակահատվածում հաստատուն քայլերով ամրապնդեց դիրքերը շուկայում, վերազինվեց, ավելացրեց նոր աշխատատեղեր, ընդլայնեց թողարկվող արտադրատեսականին:
«Ասկե Գրուպ» ԲԲ Ընկերության արտադրանքը ծածկում է ամբողջ հայկական շուկայի պահանջարկը: Գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս թողարկել տարեկան մոտ 125 հազար տոննա ամրան : Վերազինված գործարանն այսօր պատրաստ է նաև արտահանման: Ժամանակն ապացուցեց, որ մետաղագործական այս ճյուղը մեր երկրում բավականին խոստումնալից է, որի զարգացումն ապահովում է նոր հեռանկարներ այս ոլորտի համար:
Պողպատե աղացման գնդեր: «Ասկե Գրուպի» կողմից թողարկվող այս նոր արտադրանքը կիրառվում է ամենատարբեր հանքաքարերի, կրաքարի, ածուխի աղացման, մանրացման համար: Այն կարելի է կիրառել ինչպես չոր, այնպես էլ խոնավ հումքի դեպքում: Հանքանյութերն այս մեթոդով մանրացնելու տարբերակը լայն տարածում ունի աշխարհի բազմաթիվ զարգացած երկրներում և ունի մի շարք առավելություններ: Աղացման այս գնդերը հնարավորություն են տալիս 2-8 անգամ բարձրացնել արտադրողականությունը և 10-15% նվազեցնել կորուստը: Մինչև արտադրական գործընթացի մեկնարկը, հումքը ենթարկվում է մանրակրկիտ վերահսկողության, այնուհետև գլոցման վառարաններում ջերմային մշակման: Լիարժեք կարծրություն ապահովելու նպատակով ջերմամշակման ընթացքում ավելացվում են համապատասխան քիմիական նյութեր: Կախված, թե ինչ հումքի մանրացման համար են նախատեսված գնդերը՝ ստացված զանգվածը ենթարկվում է կրկնակի ջերմային մշակման: Ըստ ցանկության թողարկվում է 25 մմ-ից մինչև 125 մմ տրամաչափի պողպատե գնդեր: Այստեղ որակի վերահսկման մակարդակը ամենաբարձր նշաձողի վրա է: «Ասկե Գրուպ» ԲԲԸ-ի թողարկած արտադրանքը համապատասխանում է միջազգային բոլոր ստանդարտներին և որակի ամենաբարձր չափանիշներին: Արտադրանքը ենթարկվում է բազմաստիճան լաբորատոր փորձաքննության. Ստուգվում է մետաղի ամրությունը, քիմիական կազմը, այլ մետաղների հետ շփման ազդեցությունը: Պատրաստի արտադրանքը փաթեթավորվում է հատուկ պայուսակներում 1-2 տոննա տարողությամբ: Ըստ պատվիրատուի ցանկության՝ կարելի է արտադրանքը պահեստավորել փայտե կամ մետաղե տարրաներում: Շնորհիվ մանրակրկիտ ջերմամշակման, որակյալ հումքի, տեխնիկական բարձր հագեցվածության, լավագույն մասնագետների՝ այս պողպատե գնդերը ծառայում են երկար, ունեն մաշվածության շատ ցածր ցուցանիշ և չեն քայքայվում տարբեր մետաղական շփումներից:

02.11.2021թ.ԱՍԿԵ ԳՐՈՒՊ Բաց Բաժնետիրական ընկերության Տնօրենների խորհրդի թիվ 10 Որոշմամբ ստեղծվեց «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կազմակերպաիրավական ձևի առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ՝ Դուստր Ընկերություն՝100% բաժնեմասնակցությամբ: Ընկերության Կանոնադրական Կապիտալը կազմում է 50,000 ՀՀ դրամ:
Ընկերությունը գրանցված է Հայաստանի Հանրապետություն, ք. Չարենցավան, Երևանյան 2 հասցեում:

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 65,695,663 հազ. դրամ այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 44,374,315 հազ. դրամ, ընթացիկ ակտիվները՝ 21,320,948 հազ. դրամ, որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 67.55% և 32.45%-ը:

2024թ. 3 եռամսյակի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու տարվա աճողական շահույթը կազմել է 1,426,259 հազ. դրամ:

2024թ փետրվարի 16-ի Բաժնետերերի Արտահերթ Ժողովի որոշմամբ Ընկերության Կուտակված շահույթի մի մասը՝ 314,619,200 ՀՀ դրամ, փոխանցվեց Կանոնադրական կապիտալ, որի արդյունքում Կանոնադրական

կապիտալի չափը կազմեց 10,067,814,400 ՀՀ դրամ՝բաժնետոմսերի քանակը՝62,923,840 հատ՝յուրաքանչյուրը 160 ՀՀ դրամ անվանական ածեքով:

Իսկ այնուհետ 2024թ օգոստոսի 27-ի Բաժնետերերի Արտահերթ Ժողովի որոշմամբ Ընկերության Կուտակված շահույթի մի մասը՝ 629,238,400 ՀՀ դրամ, փոխանցվեց Կանոնադրական կապիտալ, որի արդյունքում Կանոնադրական կապիտալի չափը կազմեց 10,697,052,800 ՀՀ դրամ՝բաժնետոմսերի քանակը՝62,923,840 հատ՝յուրաքանչյուրը 170 ՀՀ դրամ անվանական ածեքով:

2024թ հունիսի 27-ին տեղի ունեցավ Ընկերության Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողով, որի ընթացքում ներկայացվեց և քննարկվեց 2023թ հաստությը.

տարեկան արդյունքներով Ընկերության համախմբված հաստությը կազմել է 30,940,005 հազ. ՀՀ դրամ, իրացված արտադրանքի ինքնարժեքը կազմել է 21,128,269 հազ. ՀՀ դրամ, վարչական և իրացման ծախսերը կազմել են՝ 783,525 հազ. ՀՀ դրամ:

Սեփական կապիտալի կառուցվածքը հետևյալն էր՝

Կանոնադրական կապիտալ՝ 9,753,195 հազ. ՀՀ դրամ

Կուտակված շահույթ՝ 18,898,626 հազ. ՀՀ դրամ

Այսպիսով սեփական կապիտալը հաշվետու տարում կազմել է 28,651,821 հազ. ՀՀ դրամ: Ընկերությունը 2023 թվականին աշխատել է շահույթով, որը կազմել է 5,285,121 հազ. ՀՀ դրամ: Նշված շահույթից 5,288,329 հազ. ՀՀ դրամը կազմել է Ընկերության շահույթը, իսկ (3,208) հազ. ՀՀ դրամը՝ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ ընկերությանը 100 տոկոս սեփականության իրավունքով պատկանող «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության վնասը: Նկատի ունենալով, որ Ընկերությունը ուներ նախկինում կուտակված 13,928,124 հազ. ՀՀ դրամի չափով շահույթ, ընդհանուր կուտակված շահույթը կազմել է 18,898,626 հազ. ՀՀ դրամ:

Քննարկման և քվեարկության արդյունքում շահույթի բաշխման որոշում չընդունվեց, քանի որ Ընկերությունը ներկա պահին իրականացնում է ներդրումային աշխատանքներ նոր սարքավորումների ձեռք բերման և գործող հիմնական միջոցների վերազինման ու հզորացման նպատակով:

Ընկերությունը 11.06.2021թ թողարկել և տեղաբաշխել է՝15,000,000,000 ՀՀ դրամի 1,500,000 հատ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով և 12% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 15,000,000 ԱՄՆ դոլարի 150,000 հատ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով և 7% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով անվանական արժեկտրոնային պարտատոմսեր:

Ընկերության աշխատողների թվաքանակը 2024թ սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 666 մարդ, միջին աշխատավարձը եռամսյակի ընթացքում՝ 281,943 ՀՀ դրամ:

Ընկերության նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դատարանի կողմից պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:

Մշտապես պլանավորվում են զարգացման հեռանկարները, քանի որ ներկա պահին մշակվում են արտադրության և սպառման օպտիմալ, ճկուն տարբերակներ, որոնք կկարողանան ապահովել բիզնեսի հնարավորինս կայուն զարգացում: Ընկերությունը ճկուն գնային քաղաքականություն է վարում:

Տնօրեն՝ Հ. Մուրադյան

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՄԻՋԱՆԿՅԱԼ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համախմբված հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին	էջ 3
Համախմբված հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին	էջ 4
Համախմբված հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին	էջ 5
Համախմբված հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին	էջ 6
Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ	էջ 7

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

			31.12.2023թ		30.09.2024թ
Ակտիվ					
Ոչ ընթացիկ ակտիվներ					
Հիմնական միջոցներ	4.1		38,950,596		40,617,419
Ներդրումային գույք			1,072,520		1,055,801
Ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	4.2		4,870		4,366
Այլ ոչ ընթացիկ ֆինանսկան ակտիվներ			68		2,057,429
Տրված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար			189,429		639,700
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ			**40,217,483**		**44,374,715**
Ընթացիկ ակտիվներ					
Պաշարներ	4.3		12,279,756		12,553,175
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.4		8,704,360		8,481,750
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			-		-
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	4.5		2,690,656		286,023
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ					
Ընդամենը ընթացիկ ակտիվներ			**23,674,772**		**21,320,948**
Ընդամենը ակտիվներ			**63,892,255**		**65,695,663**
Պասիվ			31.12.2023թ		30.09.2024թ
Սեփական կապիտալ և պարտավորություններ					
Կանոնադրական (բաժնետիրական) կապիալ	4.6		9,753,195		10,697,053
Վերագնահատման պահուստ			-		
Կուտակված շահույթ (վնաս)			18,898,626		19,442,501
Պահուստային կապիտալ					
Ընդամենը սեփական կապիտալ			**28,651,821**		**30,139,554**
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	4.7		27,497,613		24,880,804
Ակտիվներին վերաբերող շնորհներ	4.8		-		-
Հետաձգված հարկային պարտավորություններ			3,733,969		3,744,324
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			**31,231,582**		**28,625,128**
Ընթացիկ պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	4.9		2,276,048		5,298,678
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4.10		1,462,070		1,632,303
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն			270,734		
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով					
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ			**4,008,852**		**6,930,981**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ			**63,892,255**		**65,695,663**

Տնօրեն՝ Հ. Մուրադյան

Ֆինանսական տնօրեն՝ Կ. Մամիկոնյան

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024Թ. 9 ԱՄԻՍ

Հազար դրամ

		Աճողական		Միջանկյալ	
	Ծանոթ.	2024թ 9 ամիս	2023թ 9 ամիս	2024թ 3 եռամսյակ	2023թ 3 եռամսյակ
Հասույթ	4,12	14,493,638	22,593,174	2,928,720	7,029,102
Վաճառքի ինքնարժեք	4,13	11,184,041	15,339,833	2,306,526	4,789,705
Համախառն շահույթ(վնաս)		**3,309,597**	**7,253,341**	**622,194**	**2,239,397**
Այլ եկամուտներ	4.14	1,349,884	424,007	315,180	26,767
Իրացման ծախսեր	4,15	49,980	274	27,355	-
Վաչական ծախսեր	4,15	497,123	537,234	155,056	186,325
Այլ ծախսեր	4,15	391,185	262,112	133,953	221,628
Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)		**3,721,193**	**6,877,728**	**621,010**	**1,858,211**
Ֆինանսական ծախսեր	4,16	**2,294,934**	**2,127,472**	**780,176**	**723,862**
Շահույթ(վնաս) մինչև հարկելը		**1,426,259**	**4,750,256**	**(159,166)**	**1,134,349**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	4,17	-	-		
Տարվա շահույթ(վնաս)		**1,426,259**	**4,750,256**	**(159,166)**	**1,134,349**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Ակտիվների վերագնահատման աճ (նվազում)					
Ընդամենը համապարփակ արդյունք		**1,426,259**	**4,750,256**	**(159,166)**	**1,134,349**
Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)		23	75	-3	18
Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)		23	75	-3	18

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն Հ. Մուրադյան

Ֆինանսական տնօրեն Կ. Մամիկոնյան

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատումից տարբերություններ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,438,576		13,928,123	23,366,699
Մնացորդի ուղղում				-
Տարվա շահույթ/(վնաս)			4,750,256	4,750,256
Թողարկված բաժնետիրական կապիտալ				-
Հաշվետու տարվա այլ համապարփակ արդյունք				-
Սեփական կապիտալի ավելացում				
Ներքին շարժեր	314,619		(314,619)	-
Շահաբաժիններ	-			-
2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ	9,753,195	-	18,363,760	28,116,955
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,753,195	-	18,898,626	28,651,821
Մնացորդի ուղղում	-	-	-	
Տարվա շահույթ/(վնաս)			1,426,259	1,426,259
Կանոնադրական կապիտալի ավելացում				-
Այլ համապարփակ եկամուտ ծախսեր			61,474	61,474
Ներքին շարժեր	943,858		(943,858)	-
Թողարկված բաժնետիրական կապիտալ				-
2024թ սեպտեմբերի 30-ի դրությամբ	10,697,053	-	19,442,501	30,139,554

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն՝ Հ. Մուրադյան

Ֆինանսական տնօրեն՝ Կ. Մամիկոնյան

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2024 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ի դրությամբ

Հազար դրամ

Գործառնական գործունեությունից հոսքեր	2024թ. 9 ամիսներ	2023թ 9 ամիսներ
Գործառնական գործունեության մատուցումից մուտքեր	18,376,906	26,036,096
Այլ մուտքեր	1,551,081	431,289
Վճարումներ մատակարարներին ապրանք և ծառայությունների համար	12,232,702	17,419,856
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	1,924,665	2,092,498
Շահութահարկի և այլ հարկերի վճարում	2,573,146	4,176,589
Սոցիալական վճարների գծով	-	-
Այլ ելքեր	80,432	110,657
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	**3,117,042**	**2,667,785**
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	0	2,000
Ներդրումային գործունեությունից մուտքեր	0	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումից	2,633,803	2,826,196
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	**-2,633,803**	**-2,824,196**
Ֆինանսավորման գործունեությունից հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	2,660,117	3,168,761
Ֆինանսավորման այլ գործունեությունից մուտքեր	142,500	
Վարկերի և փոխառությունների մարումից	1,777,184	1,270,025
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	1,877,276	1,798,640
Ֆինանսավորման այլ գործունեությունից ելքեր	2,004,584	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից զուտ հոսքեր	**(2,856,427)**	**100,096**
Ընդամենը զուտ հոսքեր	**-2,373,188**	**-56,315**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	**-31445**	**-1,053**
Դրամական միջոցների մնացորդը 2023թ դեկտեմբերի 31-ի դր.	**2,690,656**	**479,600**
Դրամական միջոցների մնացորդը *2024թ սեպտեմբերի 30-ի դր.*	**286,023**	**422,232**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն՝ Հ. Մուրադյան

Ֆինանսական տնօրեն՝ Կ. Մամիկոնյան

Ծանոթագրություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալից մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ և իր Դուստր Ընկերության 2024թ. սեպտեմբերի 30-ին ավարտվող եռամսյակի համար

1. Տեղեկատվություն ընկերության մասին

Խմբի մեջ մտնում են «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» Բաց Բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ մայր Ընկերություն) և «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» ՍՊ դուստր ընկերությունը: «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ն շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է 1995թ հուլիսի 31-ին, իսկ 05.11.2021թ տնօրենների Խորհրդի թիվ 10 որոշմամբ մայր ընկերությունը ստեղծել է «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» ՍՊ Դուստր Ընկերությունը Կանոնադրությամբ նախատեսված առևտրային գործունեություն իրականացնելու համար:

Մայր Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2

Դուստր Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2

Ընկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2 և Երևանյան 2/6

Ընկերության հիմնական գործունեության տեսակներն են՝

ա) Պողպատե ձուլվածքների արտադրություն

բ) Պողպատե ամրանների և աղացագնդերի արտադրություն

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 666

2. Պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ օրենսդրությանը համապատասխան վարվող հաշվապահական գրանցումների հիման վրա՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն ներկայացնելու նպատակով:

ՖՀՄՍ -ները Ֆինանասկան Հաշվետվութվությունների Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից ընդունված Ստանդարտները և մեկնաբանություններն են, որոնք ներառում են.

- Ֆինանասկան Հաշվետվութվությունների Միջազգային Ստանդարտները (IFRS)
- Հաշվապահական հաշվառման Միջազգային Ստանդարտները (IAS)
- Մեկնաբանությունները՝ թողարկված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Մեկնաբանությունների Կոմիտեի կողմից:

2.2 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

2.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական գործիքների, օգուտների և վնասների միջոցով արտահայտվող ներդրումների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումների, որոնք չափվում են իրական արժեքով:

2.4. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն (դրամ) է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը: Դրամով ներկայացված ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազարների ճշտությամբ:

2.5. Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ համապատասխան կազմման համար Ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ներկայացման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ ՖՀՄՍ) և կիրառվում է սկզբնական արժեքի հիմունքը բացառությամբ, որոշ վերագնահատված ակտիվների և ֆինանսական գործիքների: Սկզբնական արժեքը ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին վճարված (վճարվելիք), ստացված (ստացվելիք) դրամական միջոցների չափն է, իսկ ոչ դրամային հատուցման դեպքում՝ հատուցման իրական արժեքը:

Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվառման հիմնական քաղաքականությունները.

3.1. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին:

Ակտիվը համարվում է ընթացիկ, երբ

ա) ակնկալվում է այն իրացնել, վաճառել կամ սպառել սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,

գ) ակնկալում է այն իրացնել հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում,

դ) այն դրամական միջոց է կամ դրամական միջոցների համարժեք, բացառությամբ երբ դրա փոխանակումը կամ օգտագործումը՝ պարտավորություն մարելու նպատակով, սահմանափակված է հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիսների ընթացքում:

Բոլոր այլ ակտիվները համարվում են ոչ ընթացիկ:

Պարտավորությունը համարվում է ընթացիկ, երբ

ա) ակնկալվում է այն մարել սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,

գ) ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում,

դ) կազմակերպությունը չունի անվերապահ իրավունք՝ հետաձգելու մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիս:

Բոլոր այլ պարտավորությունները համարվում են ոչ ընթացիկ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ծախսերը ներկայացվում են ըստ գործառնության դասակարգմամբ:

Տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է միայն մեկ տարվա համադրելի տեղեկատվություն:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում և ներկայացվում է ուղղակի մեթոդով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում տոկոսների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում շահաբաժինների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Ֆինանսական հաշվետվություններում էական տեղեկատվությունը ներկայացվում է առանձին:

3.2 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Ինքնարժեքը հաշվարկվում է «Առաջին մուտք առաջին ելք» /ԱՄԱԵ/ կամ միջին կշռված արժեքի բանաձևով և ներառում է ձեռբերման արժեքը, վերամշակման ծախսումները և այլ ծախսումները, որոնք անհրաժեշտ են պաշարները գտնվելու վայր հասցնելու և անհրաժեշտ վիճակի բերելու համար: Պատրաստի և անավարտ արտադրանքի ինքնարժեքում ներառվում են նաև արտադրական վերադիր ծախսումները՝ հիմնվելով արտադրական նորմատիվային ցուցանիշների վրա: Արտադրական նորմատիվները հաստատվում են տնօրինության կողմից և ենթակա են պարբերական վերանայման:

Իրացման զուտ արժեքը դա սովորական գործունեության ընթացքում հնարավոր վաճառքի գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կազմակերպությունում արտադրանքը թողարկվում է շարունակական հիմունքով մեծ քանակությամբ, ուստի փոխառության ծախսումները չեն կապիտալացվում:

Պաշարների նյութեր բաժնում ներառվում են նաև այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Դրանք են պահեստամասերը, սպասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, արտադրական և տնտեսական գույքը, ժամանակավոր կառույցները, հատուկ հագուստը և կոշկեղենը, անկողնային պարագաները, ճաշարանային սպասքը և այլն: Այս ակտիվները ապաճանաչվում են դրանց շահագործումը սկսելու պահին:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների բոլոր դասերը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցի միավորի ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող բոլոր այն ծախսումները, որոնք անհրաժեշտ են այն աշխատանքային վիճակի բերելու համար: Սկզբնական արժեքն իր մեջ կարող է ներառել նաև փոխառության ծախսումները (տես փոխառության ծախսումներ բաժինը), ինչպես նաև ապատեղակայման, քանդման, և տեղանքի վերականգնման գնահատված ծախսումների գումարը (տես պահուստներ բաժինը), ինչպես նաև ներմուծման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը:

Հիմնական միջոցների հետագա ծախսումները՝ ներառյալ նշանակալի մասերի փոխարինման արժեքն ավելացվում են ճանաչված հիմնական միջոցի արժեքին, եթե հավանական է դրա գծով ապագա տնտեսական օգուտների ներհոսք և արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Ամենօրյա սպասարկման ծախսումները՝ ներառյալ մանր դետալների ծասխումները ճանաչվում են ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Հողամասը և շենքերը առանձին ակտիվներ են դիտարկվում և հաշվառվում են առանձին-առանձին, նույնիսկ երբ դրանք ձեռք են բերվում միասին:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը որոշվում է որպես այն գումարը, որով հնարավոր կլիներ վաճառել ակտիվը տվյալ պահին, եթե լիներ այն տարիքի և վիճակի, որն ակնկալվում էր, որ կլիներ դրա օգտակար ծառայության վերջում:

Այն դեպքերում, երբ ակտիվը օգտակար ծառայության վերջում որպես թափոն չունի զգալի արժեք, և գնահատված օգտակար ծառայության ժամկետը գերազանցում է մնացած տնտեսական ծառայության ժամկետի 80%-ը, ապա մնացորդային արժեքը գնահատվում է 0:

Մաշվածության մեթոդը արտացոլում է այն մոդելը, որով կազմակերպությունը ակնկալում է սպառել ակտիվի տնտեսական օգուտները: Եթե գնահատման պահին տնտեսական օգուտների անհավասարաչափ սպառումը բացահայտ չէ, ապա մաշվածության հաշվարկման համար օգտագործվում է ուղիղ գծային մեթոդը: Առանձին բաղադրիչների համար կարող է հաշվարկվել առանձին մաշվածություն:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովների կողմից վերանայվում են հիմնական միջոցների մնացած օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության հաշվառման մեթոդները:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունները որոշելու համար կազմակերպությունն առաջնորդվում է ըստ դասերի հետևյալ ուղեցույցերով.

Շենքեր շինություններ	50-70 տարի,
Մեքենա-սարքավորումներ	15-25 տարի,
Փոխադրամիջոցներ	3-5 տարի,
Հոսքային գծեր և ռոբոտատեխնիկա	20-25 տարի:

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն մատչելի է օգտագործման համար, և դադարում է ակտիվի որպես վաճառքի համար պահվող դասակարգվելուց և ակտիվն ապաճանաչելուց:

3.4. Ներդրումային գույք

Ներդրումային գույք է համարվում այն գույքը (հող կամ շինություն), որը պահվում է վարձակալությունից և/կամ դրա արժեքի աճից եկամուտ վաստակելու նպատակով: Ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով և կիրառվում է հիմնական միջոցների սկզբնական արժեքի մոդելով հաշվառման կանոնները ըստ ՀՀՄՍ 16-ի:

3.5. Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և օտարման խումբ

Ոչ ընթացիկ ակտիվները (կամ օտարման խումբը) դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվ, երբ դրանց հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման վաճառքի ձևով և վաճառքի տեղի ունենալը շատ հավանական է:

Հիմնական միջոցի, ոչ նյութական ակտիվի, ներդրումային գույքի, բաժնեմասնակցության կամ սկզբնական արժեքի մեթոդով հաշվառվող ներդրումների, ինչպես նաև օտարման խումբ կազմող ակտիվների և պարտավորությունների վերադասակարգման համար անհրաժեշտ է, որ ակտիվը (կամ խումբը) իր ներկա վիճակում պատրաստ լինի անմիջապես վաճառելու համար և ակտիվորեն առաջարկվի շուկայում խելամիտ գնով:

Որպես վաճառքի համար պահվող ակտիվ կամ օտարման խմբի բաղադրիչ վերադասակարգումից անմիջապես առաջ ակտիվներն ու պարտավորությունները վերաչափվում են ըստ համապատասխան ՖՀՄՍ-ների և ակտիվի կամ պարտավորության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Հետագայում դրանք չափվում են վերադասակարգման պահի հաշվեկշռային արժեքից և հաշվետու ամսաթվի իրական արժեք՝ հանած

վաճառքի ծախսումներից նվազագույնով: Այս վերաչափումները ամբողջությամբ ճանաչվում են որպես շահույթ կամ վնաս:

3.6. Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներն ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ձեռնարկատիրական գործունեության միավորմամբ ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերման օրվա իրական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված հետազոտության ծախսումները՝ նրանք, որոնք կատարվում են նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռքբերելու ակնկալիքով, ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված մշակման ծախսումները՝ նրանք, որոնք կատարվում են նոր կամ էականորեն բարելավված նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների ստեղծումը պլանավորելու և նախագծելու համար, ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ միայն այն դեպքում երբ.

- ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել,
- առկա է ակտիվը ավարտուն վիճակի հասցնելու, օգտագործելու կամ վաճառելու տեխնիկական իրագործելիությունը, ղեկավարության մտադրությունն ու կարողությունը,
- ապահովված է մշակումն ավարտելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը
- հնարավոր է ցուցադրել այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու ապագա տնտեսական օգուտներ:

Մնացած մշակման ծախսումները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:

Ամորտիզացիան հաշվառվում է գնահատված օգտակար ծառայության ընթացքում ուղիղ գծային մեթոդով, եթե տնտեսական օգուտների անհավասարաչափ սպառումը բացահայտ չէ: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները որոշվում են ղեկավարության կողմից կատարված կանխատեսումների և ֆինանսական պլանավորման հիման վրա: Օգտակար ծառայությունն ու ամորտիզացիոն մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր տարվա վերջում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները 3 – 10 տարի են:

Ոչ նյութական ակտիվների հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ դրանք ավելացնում են ապագա տնտեսական օգուտների ներհոսքը: Մնացած բոլոր հետագա ծախսումները՝ ներառյալ տարեկան վճարներն ու ներստեղծված ապրանքանիշերը ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

3.7. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների գծով կատարվում է վերլուծություն արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Արժեզրկման հայտանիշի առկայության դեպքում գնահատվում է այդ ակտիվի փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես իրական արժեքից (հանած վաճառքի անհրաժեշտ ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների ապագա հոսքերը հաշվարկվում են ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որը սովորաբար կազմակերպության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն է:

Երբ առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, ապա փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին խելամիտ և հետևողական բաշխման հիմունքով, որը սովորաբար հաշվեկշռային արժեքների համամասնությունն է:

Անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվների, անավարտ ոչ նյութական ակտիվների և գուդվիլի արժեզրկումը ստուգվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.8. Արտարժույթ

Կազմակերպության գործունեության ֆունկցիոնալ արժույթ է համարվում ՀՀ դրամը, քանի որ գործունեությունը հիմնականում ծավալվում է ՀՀ տարածքում: ՀՀ դրամն է հանդիսանում նաև կազմակերպության ներկայացման արժույթը:

Արտարժույթով գործառնությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ճանաչման պահի սփոթ փոխանակման փոխարժեքով: Հետագա հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ դրամային հոդվածների մնացորդները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի սփոթ փոխանակման փոխարժեքով: Առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես շահույթ կամ վնաս ֆինանսական արդյունքներում:

Արտարժույթով գործարքների և՛ սկզբնական ճանաչման համար և՛ հետագա վերաչափման համար կիրառվող սփոթ փոխարժեք է համարվում ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:

3.9. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, կազմում են այդ ակտիվի արժեքի մաս: Այլ փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս:

Այն ակտիվն է համարվում որակավորվող, որին անհրաժեշտ է զգալի ժամանակահատված (սովորաբար 6 ամսից ոչ պակաս) որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար:

Փոխառության ծախսումները կարող են չկապիտալացվել, երբ շարունակական հիմունքով արտադրվող պաշարների անկախ արտադրական պրոցեսի տևողությունից և կենսաբանական ակտիվի հետ են կապված:

Կապիտալացվող փոխառության ծախսումները նվազեցվում են բացառապես որակավորվող ակտիվ ձեռքբերելու նպատակով ստացված փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումներից ստացված եկամուտների չափով:

3.10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչներ են համարվում դրամական միջոցները դրամարկղում, դրամական միջոցները ճանապարհին, ցպահանջ հաշիվների մնացորդները, մինչև 3 ամիս մարման ժամկետով հեշտ իրացվելի և ցածր ռիսկային ֆինանսական ներդրումների մնացորդները, ինչպես նաև բանկային օվերդրաֆտները: Վերջիններիս մնացորդները արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ընթացիկ պարտավորություններ բաժնում:

3.11. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հասույթը ներկայացվում է զեղչերի, հետ վերադարձի և քանակային զիջումների ազդեցության ճշգրտված գումարով:

Վաճառքից հասույթը ճանաչվում է այն պահին, երբ փոխանցվում են սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերն ու հատույցները, ակընկալվում է տնտեսական օգուտների ներհոսք, ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել, չի պահպանվում վերահսկողություն ապրանքների նկատմամբ և հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ռիսկերն ու հատույցները համարվում են փոխանցված այն պահին, երբ ապրանքները ստացվում են հաճախորդի կողմից: Այնուամենայնիվ արտահանումների դեպքում ռիսկերն ու հատույցները փոխանցվում են այն պահին, երբ ապրանքները փոխանցվում են տրանսպորտային կազմակերպությանը, քանի որ սովորաբար այդ ապրանքները ենթակա չեն հետ վերադարձման: Առանձին գործարքներում կարող են սահմանվել հատուկ արտոնյալ պայմաններ, որոնց պատճառով ռիսկերի և հատույցների փոխանցման պահը հետաձգվի:

Եթե վճարման ժամկետը հետաձգվում է 60 օրից ավել ժամանակահատվածով, ապա հասույթը չափվում է ակընկալվող հատուցման զեղչված արժեքով կիրառելով պայմանական տոկոսադրույքը:

Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը գերազանցում է սովորաբար առաջարկվող վաճառքի գինը, ապա պայմանական տոկոսադրույք է համարվում այն դրույքը, որը զեղչում է սպասվող վճարումների գումարը՝ հասցնելով վաճառքի ընթացիկ գնին:

Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը չի գերազանցում սովորաբար առաջարկվող վաճառքի գինը, ապա պայմանական տոկոսադրույք է համարվում նմանատիպ պայմաններով ֆինանսական գործիքի գերակշռող եկամտաբերության դրույքը:

Մինչև 60 օր վճարման ժամկետով իրացումների դեպքում տոկոսների հաշվարկ չի կատարվում և հասույթը ճանաչվում է հատուցման անվանական արժեքով:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտվածության աստիճանի հիմունքով: Այն դեպքերում, երբ ավարտվածության աստիճանը հնարավոր չէ չափել, հասույթը ճանաչվում է միայն կատարված այն ծախսումների չափով, որոնք կփոխհատուցվեն:

Այն դեպքերում, երբ դա հնարավոր է ավարտվածության աստիճանը որոշվում է կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների հարաբերակցությամբ: Մնացած դեպքերում ավարտվածության աստիճանը որոշվում է տվյալ ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ:

Տոկոսային հասույթը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքով, այնպես ինչպես նկարագրված է ըստ ՀՀՄՍ 39-ում:

3.12. Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում, որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները, որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում

Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սիստեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա:

3.13. Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ որպես անցյալ դեպքերի արդյունք կազմակերպությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն չափել և որը կատարելու համար պահանջվում է տնտեսական օգուտների արտահոսք:

Երաշխիքների և անբարենպաստ պայմանագրերի գծով պահուստները չափվում են պարտականությունը կատարելու համար անհրաժեշտ միջոցների իրական արժեքի լավագույն գնահատականի հիման վրա՝ ելնելով անցյալ փորձից և ապագա ակընկալիքներից: Գնահատումը կատարվում է տնօրենի հրամանով կազմված հանձնաժողովների կողմից:

Ապատեղակայման և տեղանքի բարեկարգման գծով պահուստները չափվում են գնահատված գումարի ներկա արժեքով, եթե պահուստի ժամկետը գերազանցում է 5 տարին: Այսպիսի դեպքերում որպես զեղչման դրույք սովորաբար համարվում է կազմակերպության լրացուցիչ փոխառություն ներգրավվելու տոկոսադրույքը:

Արձակուրդային վճարների և հավանական պարգևավճարների գծով պահուստները գնահատվում են յուրաքանչյուր ամսվա վերջում ելնելով ընթացիկ և սպասվող աշխատավարձերի գումարից, աշխատանքային օրենսդրության պահանջներից և այլ կանխատեսումներից: Զուգահեռ ստեղծվում է նաև պահուստ արձակուրդային վճարների կամ պարգևավճարների մասով գործատուի կողմից կատարվելիք սոցիալական ապահովության վճարների համար:

3.14. Էական սխալներ

Էական սխալներ՝ ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված սխալներ են, որոնք այնպիսի նշանակություն ունեն, որ նախորդ մեկ կամ ավելի ժամանակշրջանների ֆինանսական հաշվետվությունները չեն կարող այլևս արժանահավատ համարվել, իրենց ներկայացման թվի դրությամբ:

Նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը պետք է արտացոլվի հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում, ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը:

3.15. Ֆինանսական գործիքներ

Բոլոր ֆինանսական ակտիվները ու ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով և դասակարգվում են հետևալ կատեգորիաներում՝ ելնելով գործարքի նպատակից և ղեկավարության ակընկալիքներից.

Ֆինանսական ակտիվներ

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ,
- Տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորություններ

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ,
- Այլ ֆինանսական պարտավորություններ:

Կանոնավոր կերպով գնումների և վաճառքների դեպքում ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվում կամ ապաճանաչվում են առևտրի ամսաթվին:

Վարկերի և փոխառությունների գծով ֆինանսական ակտիվները ու պարտավորությունները ճանաչվում են դրանց տրամադրման ամսաթվին:

Ֆինանսական գործարքի հետ կապված ծախսումները ներառվում են համապատասխան ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքում, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Վերջիններիս դեպքում դրանք ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշվում է շուկայի հիման վրա: Սակայն պարտքային գործիքի շուկայի բացակայության դեպքում իրական արժեքը հաշվարկվում է որպես սպասվող հոսքերի ներկա արժեք որոշված նմանատիպ գործիքի միջին շուկայական տոկոսադրույքով: Այն դեպքերում, երբ ֆինանսական գործարքի տոկոսադրույքը տարբերվում է նմանատիպ ֆինանսական գործիքի միջին շուկայական տոկոսադրույքից, սակայն տարբերությունը չի գերազանցում շուկայական դրույքի 20%-ը, ապա ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքը համարվում է ճանաչման օրվա դրությամբ իրական արժեք:

Անտոկոս կամ ցածր տոկոսով ստացված ցպահանջ վարկերի և փոխառությունների իրական արժեք է համարվում վարկի կամ փոխառության անվանական արժեքը, քանի որ դրանք ենթակա են մարման ցանկացած պահին՝ հնարավորության առկայության դեպքում, և կազմակերպության ղեկավարությունը ակընկալում է մարել դրանք շատ կարճ ժամկետներում:

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքով և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս, եթե չեն ներառվում որակավորվող ակտիվի ինքնարժեքում համաձայն ՀՀՄՍ 23-ի: Այնուամենայնիվ ֆինանսական հաշվետվություններում շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով հաշվարկված տոկոսները չեն առանձնացվում իրական արժեքի փոփոխությունից առաջացող օգուտից կամ վնասից:

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են միայն այն դեպքում, երբ առկա է գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և ղեկավարությունը մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ

3.16. Ֆինանսական գործիքների արժեզրկում

Ֆինանսական ակտիվների համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դիտարկվում է որևէ արժեզրկման հայտանիշի առկայությունը: Ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկման, եթե սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերը /արժեզրկման հայտանիշ/ վկայում են այն մասին, որ ֆինանսական ակտիվի գծով սպասվող դրամական ներհոսքերը կարող են անբարենպաստ փոխվել:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումը հաշվարկվում է որպես հաշվեկշռային արժեքի և վերանայված դրամական հոսքերի զեղչված արժեքի, հաշվարկված սկզբնական տոկոսադրույքով, տարբերությունը:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումը գնահատվում է հավաքական հիմունքով՝ ելնելով համանման պարտքային բնութագրեր ունեցող պարտքերի պատմական կորուստների փորձից:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը նվազում է որպես հետևանք մի դեպքի, որը տեղի է ունեցել արժեզրկումը ճանաչելուց հետո, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը ենթակա է հակադարձման, բացառությամբ որպես վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային գործիքների:

Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Շենքեր, շինություններ և կառույցներ	Մեքենաներ և սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ	Անավարտ շինարարություն և ոչ նյութական հիմն միջոցներ ձեռքբերման համար	Ընդամենը հիմնական միջոցներ առանց ներդրումային գույքի	Ներդրումային գույք
Սկզբնական արժեք							
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	11,890,626	23,021,065	6,007,200	441,394	5,275,791	46,636,076	1,117,043
Ավելացումներ այդ թվում	386,356	1,868,025	319,429	393,984	1,419,875	4,387,669	
Վերագնահատումից						-	
Նվազեցումներ		99,309		301,547	1,077,404	1,478,260	
Առ 30 սեպտեմբեր 2024թ.	12,276,982	24,789,781	6,326,629	533,831	5,618,262	49,545,485	1,117,043
Կուտակված մաշվածություն							
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	1,472,397	5,578,851	561,838	72,394		7,685,480	44,523
Տարվա մաշվածությունը այդ թվում	254,134	689,709	268,763	30,553		1,243,159	16,719
Վերագնահատումից						-	
Նվազեցումներ		41		532		573	
Առ 30 սեպտեմբեր 2024թ.	1,726,531	6,268,519	830,601	102,415	-	8,928,066	61,242
Զուտ հաշվեկշռային արժեք							
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**10,418,229**	**17,442,214**	**5,445,362**	**369,000**	**5,275,791**	**38,950,596**	**1,072,520**
Առ 30 սեպտեմբեր 2024թ.	**10,550,451**	**18,521,262**	**5,496,028**	**431,416**	**5,618,262**	**40,617,419**	**1,055,801**

Ներդրումային գույքը ներառում է հիմնականում առևտրային նպատակների համար նախատեսված գույքը, որը պահվում է կապիտալի աճի կամ վարձակալությունից եկամուտ վաստակելու համար, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, և չորոշված ապագա նպատակով գույքը:

Ներդրումային գույքը վարձակալության է հանձնված կապակցված կողմին անորոշ ժամկետով:

Ներդրումային գույքը հաշվառվում է սկզբնական արժեքի մոդելով

Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

	Լիցենզիա	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.		**7489**	**23772**	**31261**
Ավելացումներ այդ թվում				0
Վերագնահատումից				0
Նվազեցումներ				0
Առ 30 սեպտեմբեր 2024թ.	**0**	**7489**	**23772**	**31261**
Կուտակված մաշվածություն				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.		**2619**	**23772**	**26391**
Տարվա մաշվածությունը այդ թվում		504		504
Վերագնահատումից				0
Նվազեցումներ				0
Առ 30 սեպտեմբեր 2024թ.	**0**	**3123**	**23772**	**26895**
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**0**	**4870**	**0**	**4870**
Առ 30 սեպտեմբեր.2024թ.	**0**	**4366**	**0**	**4366**

4.2 Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար

Հազար դրամ

	30.09.24թ	31.12.23թ.
Տրված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	639,700	189,429

Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

	30.09.24թ	31.12.23թ
Մնացորդը տարեվերջին	**Հաշվեկշռային արժեք**	**Հաշվեկշռային արժեք**
Պարտատոմսեր	2,057,361	-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	68	68
	2,057,429	**68**

4.3 Պաշարներ

Հազար դրամ

	30.09.2024թ	31.12.2023թ.
Հումք և նյութեր	8,981,127	7,788,777
Պահեստամասեր	2,408,190	772,467
Անավարտ արտադրանք	389,351	2,836,852
Պատրաստի արտադրանք	620,406	490,139
Վառելիք և սպառողական նյութեր	103,862	95,218
Հումքը Ճանապարհին	27	206,520
Այլ	50,212	89,783
Ընդամենը	**12,553,175**	**12,279,756**

4.4 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	30.09.24թ	31.12.23թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, այդ թվում	8,481,750.00	8,704,360.00
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	6,178,952.00	6,851,752.00
Այլ դեբիտորական պարտքեր	32,225.00	22,321.00
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(39,388.00)	(39,388.00)
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	420,552.00	183,407.00
Տրված կանխավճարներ	1,889,409.00	1,686,268.00

Տրամադրված կարճաժամկետ փոխառություններ

Հազար դրամ

	30.09.24թ	31.12.23թ
	Հաշվեկշռային արժեք	Հաշվեկշռային արժեք
Մնացորդը տարեվերջին	-	-

4.5 Դրամական միջոցների և դրանց համարժեքներ

Հազար դրամ

	31.12.23թ.	30.09.24թ.
Դրամարկղ	14,548	23,444
Բանկային հաշիվներ	2,676,108	262,579
Ընդամենը	**2,690,656**	**286,023**

4.6. Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումարը

4.6.1. Հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալ

Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակը 62,923,840 հատ սովորական բաժնետոմս է՝ որոնք վճարված են: Բաժնետերերի 27.08.2024թ Արտահերթ ժողովի արձանագրությամբ որոշվեց կուտակված շահույթից 629,238,400 ՀՀ դրամը փոխանցել Կանոնադրական կապիտալ,որի արդյունքում Կանոնադրական կապիտալը համալրվեց և կազմեց 10,697,052,800 ՀՀ դրամ՝ընդհանուր քանակը 62,923,840 հատ սովորական բաժնետոմսով՝յուրաքանչյուրը 170 դրամ անվանական արժեքով:Չվճարված բաժնետոմսեր չկան:

4.7. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ

	31.12.23թ.	30.09.24թ.
Մնացորդը տարեսկզբին	0	0
Շնորհի ստացում		
Շնորհի ծախսում	0	0
Մնացորդը տարեվերջին	0	0

4.8. Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ

4.8.1. Երկարաժամկետ վարկեր

Հազար դրամ

	31.12.2023թ	30.09.24թ.
	Հաշվեկշռային արժեք	Հաշվեկշռային արժեք
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	6,425,763	4,071,454

4.8.2. Երկարաժամկետ փոխառություններ

Հազար դրամ

	31.12.23թ.	30.09.24թ.
	Հաշվեկշռային արժեք	Հաշվեկշռային արժեք
Մնացորդը տարեվերջին	0	0

4.8.3. Պարտատոմսերի գծով պարտավորություններ

Հազար դրամ

	31.12.23թ.	30.09.24թ.
	Հաշվեկշռային արժեք	Հաշվեկշռային արժեք
Մնացորդը տարեվերջին	21,071,850	20,809,350

4.9. Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ

4.9.1. Ընթացիկ պարտավորություններ

Հազար դրամ

	31.12.2023թ	30.09.24թ.
Գրավով ապահովված բանկային վարկեր	2,151,081	5,173,231
Գրավով չապահովված պարտավորություններ պարտատոմսերի գծով	124,967	125,447
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից		
Ընդամենը	**2,276,048**	**5,298,678**

4.10 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ

	31.12.23թ.	30.09.24թ.
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում	1,462,070	1,632,303
1. Ստացված կանխավճարներ	-	120,000
2. Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	969,697	908,515
3. Կրեդիտորական պարտքեր ծառայությունների գծով		
4. Կրեդիտորական պարտքեր պարտքեր այլ կապակցված կազմակերպությունների գծով		
5. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	113,812	236,423
6. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	182,381	164,244
7Արձակուրդային վճարների գծով պահուստ	196,015	196,015
8. Այլ կրեդիտորական պարտքեր	165	7,106

4.11 Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով

Հազար դրամ

	31.12.23թ.	30.09.24թ.
Կրեդիտորական պարտք շահաբաժինների գծով	-	

4.12. Հասույթ

Հազար դրամ

	30.09.24թ.	30.09.23թ.
Արտադրանքի իրացում	14,493,638	22,581,609
Ապրանքի իրացում		
Ծառայությունների մատուցում		11,565
Ընդամենը	**14,493,638**	**22,593,174**

4.13. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ

	30.09.24թ.	30.09.23թ.
Աշխատավարձ	813,785	1,650,664
Մաշվածության ծախս	1,009,322	1,422,812
Նյութական ծախսեր	7,751,472	9,098,136
Այլ ծախսեր	1,609,462	3,168,221
Ընդամենը	**11,184,041**	**15,339,833**

4.14. Այլ եկամուտներ

Հազար դրամ

	30.09.24թ.	30.09.23թ.
Պաշարների օտարումից եկամուտ	173,081	28,410
Ֆինանսական ներդրումից Տոկոսային եկամուտ	137,750	
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտ		112
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	424,461	
Պարտավորության ներումից եկամուտ		
Հաշվետու տարվա հարկային տույժերի և տուգանքների ներումից եկամուտ		
Դեբիտորական պարտքերի պահուստի հակադարձումից		
Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտ		
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	424,679	335,119
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտ		
Ոչ գործառնական հեջավորման գործիքների վերաչափումից օգուտներ		
Գործառնական վարձակալությունից	131,104	41,412
Կրեդիտորոկան պարտքերի դուրսգրում	7,013	85
Այլ եկամուտներ	51,796	18,869
Ընդամենը	**1,349,884**	**424,007**

4.15. Վարչական և այլ ծախսեր

Հազար դրամ

	30.09.24թ.	30.09.23թ.
1. Վարչական ծախսեր, այդ թվում	**497,123**	**537,234**
Փոխհատուցումներ աշխատակիցներին	282,066	314,139
Ներկայացուցչական ծախսեր	13,478	1,077
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր	13,079	29,659
Անվտանգության ծառայություն	5,400	5,400
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	42,015	36,899
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	44,953	39,641
Բանկային, ապահովագրության, պահպանության և տրանսպորտային ծախսեր	77,218	102,793
Չփոխհատուցվող ծախսեր հարկերից և տուրքերից	18,914	7,086
Վարչական այլ ծախսեր		540
2. Իրացման ծախսեր	**49,980**	**274**
Փոխհատուցումներ աշխատակիցներին		
Պահեստում գտնվող արտադրանքի,ապրանքների փաթեթավորման, տեսակավորման և պահպանման ծախսեր		

Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովագրության ծախսեր		
Տրանսպորտային և բեռնափոխադրման ծախսեր	49,604	59
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր		
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		
Մարկետինգի և գովազդի ծախսեր		150
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր		
Այլ իրացման ծախսեր	376	65
3. Գործառնական այլ ծախսեր	**368,772**	**49,719**
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի ստեղծման ծախսեր		
Այլ պաշարների օտարումից վաճառքներից ծախսեր	187,154	34,439
Անհուսալի դեբիտորական պարտքի դուրս գրում	282	
Պաշարների արժեքի փոփոխություններից ծախսեր		
Վարձակալության ծախսեր	23,619	
Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանման ծախսեր	156,445	
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	62	31
Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, խոտանված ապրանքի հետ կապված ծախսեր	1,210	13,610
Գորառնական այլ ծախսեր		1,639
4. Այլ ոչ գործառնական ծախսեր	**22,413**	**212,393**
Ակտիվների վերագնահատումից և վերաչափումից ծախս	14,303	
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	8,110	22,220
Հիմնական միջոցների օտարումից վնաս		
Փոխարժեքային տարբերությունից վնաս		185,432
Հիմնական միջոցների լուծարման ծախսեր		4,741
Ընդամենը	**938,288**	**799,620**

4.16. Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ

	30.09.24թ.	30.09.23թ.
Ստացված վարկերի հետ կապված հաշվեգրված տոկոսներ	634,764	475,929
Ստացված փոխառությունների հետ կապված հաշվեգրված տոկոսներ		
Տեղաբաշխված պարտատոմսերի գծով հաշվեգրված տոկոսային ծախս	1,660,170	1,651,543
Ընդամենը	**2,294,934**	**2,127,472**

Ընկերությունը 11.06.2021թ. թողարկել և տեղաբաշխել է 15,000,000,000 ՀՀ դրամի 1,500,000 հատ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով և 12% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով 15,000,000 ԱՄՆ դոլարի 150,000 հատ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 120 ամիս շրջանառության ժամկետով և 7% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով անվանական արժեկտրոնային պարտատոմսեր:

4.17. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ

	30.09.24թ.	30.09.23թ.
Ընթացիկ հարկ		
Արտոնություն շահութահարկի գծով		
Հետաձգված հարկային պարտավորություններ		
Ընդամենը	-	-

5.Ֆինանսական գործիքներ

5.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.15-ում:

5.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ

	31.12.23թ	30.09.24թ.
Փոխառություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8,704,360	8,481,750
Մնացորդը դրամարկղում և բանկում	2,690,656	286,023
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ընդամենը	**11,395,016**	**8,767,773**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ

	31.12.23թ	30.09.24թ.
Վարկեր և փոխառություններ	8,701,811	9,370,132
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,462,070	1,632,303
Այլ ֆինանսական պարտավորություններ	21,071,850	20,809,350
Ընդամենը	**31,235,731**	**31,811,785**

Տես՝ ծանոթագրություն 3.15-ը՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

6. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Հետևաբար, Ընկերության ֆինանսկան հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթ ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

7.Ֆինանսական ռիսկի գործոններ

7.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստը կազմել է 39,388 հազար դրամ:

7.2 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը վերաբերում է Ընկերության կողմից իր պարտվորությունները ժամանակին մարելուն և անմիջականորեն կապված է Ընկերության դրամական միջոցների հավաքագրման հետ, ինչը նկարագրված է վերը նշված պարտքային ռիսկերում:

8. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

9. Պայմանականություններ

9.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել բնակչությունից դեբիտորական պարտքերի ժամանակին հավաքագրումը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

10. Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների և գործունեության ընդհատման արդյունքում հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

11. Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա է են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

12. Կապակցված կողմեր և գործարքներ նրանց միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են.

12.1 Վերահսկողության փոխահարաբերություն

Դուստր Ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված է հետևյալ դուստր ընկերությունը

Ընկերության անունը	Մասնաբաժին	Գրանցման ամսաթիվ	Գրանցման երկիր	Գործունեության ոլորտ
«ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	100%	05.11.2021	ՀՀ	առևտրային

Համախմբման հիմունքները

Դուստր ընկերություններ

Դուստր են հանդիսանում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Խմբի կողմից ձեռքբերված դուստր ընկերությունները հաշվառվում են գնման մեթոդով: Ձեռքբերման ժամանակ ձեռքբերված որոշելի ակտիվները, ինչպես նաև ստանձնած որոշելի պարտավորությունները և պայմանական պարտավորությունները սկզբնապես չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով՝ անկախ չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասի չափից:

Ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Եթե ձեռքբերման արժեքը փոքր է ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական

պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասից, ապա տարբերությունը ճանաչվում է տարվա արդյունքում:

Չվերահսկվող (փոքրամասնության) բաժնեմասը դուստր ընկերության այն բաժնեմասն է, որը չի պատկանում Խմբին: Հաշվետու ամսաթվի դրությամբ չվերահսկվող բաժնեմասը դուստր ընկերության որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքի փոքրամասնության բաժնետերերի բաժնեմասն է, ինչպես նաև ձեռքբերման օրվանից սկսած՝ փոքրամասնության բաժինը սեփական կապիտալի շարժում: Չվերահսկվող բաժնեմասը ներկայացվում է սեփական կապիտալում:

Փոքրամասնությանը վերագրվող վնասները դուստր ընկերության սեփական կապիտալում չեն գերազանցում չվերահսկվող բաժնեմասը, եթե փոքրամասնության բաժնետերերը

պարտավորված չեն իրենց վրա վերցնել կորուստները: Բոլոր նմանատիպ կորուստները բաշխվում են Խմբին:

Համախմբման արդյունքում չներառված գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները:

Ընկերությունը մայր, ասոցացված կազմակերպություն չունի և չի վերահսկվում (այդ թվում նշանակալից ազդեցության) այլ կազմակերպության կողմից:

Ընկերության Բաժնետոմսերի 49.35%-ը պատկանում է MORACO HOLDINGS LIMITED-ին, Միխաիլ Գեորգիի Հարությունյանին՝ 16.53%, Տիգրան Միխաիլի Հարությունյանին՝ 16.53% և Վահան Միխաիլի Հարությունյանին՝ 16.30 %:

12.2. Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որոնք ներառված են անձնակազմի գծով ծախսումներում (տես ծանոթագրություն 5).

Հազար դրամ

	30/09/23		30/09/24	
ԱԱՀ	Աշխ.	Կենս. ֆոնդ.	Աշխ.	Կենս. ֆոնդ
Տնօրեն - Հ. Մուրադյան	27,155	700	26,118	788
Տնօրենի խորհրդական - Խ. Անտոնյան	12,495		10,397	
Ֆինանսական տնօրեն - Կ. Մամիկոնյան	18,741	788	15,382	775
Կոմերցիոն տնօրեն - Գ. Սարիբեկյան	20,466	878	17,250	878
Արտադր. գծով տնօրեն - Ա. Հարությունյան	18,682	788	15,451	788
Շինարարության գծով տնօրեն – Ռ. Յարմալոյան	12,508		10,300	
Էներգետիկայի գծով տնօրեն – Հ. Շեյխուկ	18,852		15,153	
Տրանսպորտի գծով տնօրեն – Դ. Հարությունյան	14,818	627	16,063	788
Գլխավոր ճարտարագետ – Վ. Նիկոլյան	7,532		6,242	

Տնօրեն

Հրաչյա Մուրադյան

Ֆինանսական տնօրեն

Կարինե Մամիկոնյան